

A 18.00.01
7-50

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ԾԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԱՐԴԱՏ ՎԱԶՐԻԿԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

**ՇՈՒՇԻ ԶԱՐԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԵՎ
ՌԵԱԲԻԼԻՏԱՑԻԱՑԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

ԺԸ.00.01 «Ծարտարապետություն»
մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2006

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
АРХИТЕКТУРЫ И СТРОИТЕЛЬСТВА

ПЕТРОСЯН САРХАТ ВАЗРИКОВИЧ

**ПРОБЛЕМЫ ГРАДОСТРОИТЕЛЬНОГО РАЗВИТИЯ
И РЕАБИЛИТАЦИИ ШУШИ**

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени
кандидата архитектуры по специальности
18.00.01 - "Архитектура"

Ереван 2006

Ատենախոսության թեման հաստատվել է Երեւանի Ճարտարապետության եւ Շինարարության Պետական Համալսարանում

Գիտական ղեկավար՝ Երատ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Ա.ԱՌՈՒՍԱՄՅԱՆ


Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Երատ. դոկտոր Մ.Ա.ԳԱՄՊԱՐՅԱՆ
Երատ. թեկնածու Ա.Ա.ԱԼՈՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ Զաղաքաշինության Նախարարության
Ճարտարապետության Ազգային Թանգարան-ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2006 թ. հունիսի 29-ին, ժամը 14-ին Երեւանի Ճարտարապետության եւ Շինարարության Պետական Համալսարանի 029 մասնագիտական խորհրդի նիստում, հետեւյալ հասցեում՝ 375009, Երեւան, Տերյան 105:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՃՇՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2006 թ. մայիսի 29-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
Ճարտարապետության թեկնածու, դոցենտ  Ս.Ս. ԲԱՐՍԵԳՅԱՆ

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете архитектуры и строительства


Научный руководитель : доктор архит., проф. А.А. АРУСТАМЯН
Официальные оппоненты: доктор архит. М.А. ГАСПАРЯН
канд. архит. А.А. АЛОЯН


Ведущая организация: Национальный Музей-Институт
Архитектуры
Министерство градостроительства РА

Защита состоится 29-го июня 2006 г. в 14:00 на заседании
Специализированного совета 029 Ереванского государственного
университета архитектуры и строительства по адресу: 375009, Ереван,
ул. Теряна 105.

С диссертацией можно ознакомиться в библиотеке ЕГУАС.

Автореферат разослан 29-го мая 2006 г.

Ученый секретарь специализированного совета
кандидат архитектуры, доцент  Т.С. БАРСЕГЯН



2531-2006

Ատենախոսության արդիականությունը: Հայկական միակ կանգուն մնացած բերդաքաղաք Շուշին 20-րդ դարի վերջին տասնամյակում հայ ժողովրդի պատմության շրջադարձային փուլում արցախյան գոյապայքարի հաղթանակների սկիզբը դրեց: 1992 թվականի Մայիսի 9-ին, Շուշին ազատագրելով՝ հայ մշակույթի նշանավոր կենտրոններից մեկը վերադարձվեց իր իսկական տեղերին:

Զաղաքական բարդ իրավիճակի կիզակետում հայտնված Լեռնային Ղարաբաղի պատկանելության խնդրի արդյունքում տեղի ունեցած զինված ընդհարումների հետեւանքով ավերվեցին մի շարք քնակավայրեր: Դրանց թվին էր պատկանում ուշ միջնադարյան Հայաստանի կարեւորագույն կենտրոններից մեկը՝ Շուշի քաղաքը:

Խորհրդային տարիներին արդբեջանական իշխանությունների կողմից ջանք չի խնայվել մեկուսացնել քաղաքը զարգացման համընդհանուր գործընթացներից, այն ակնկալիքով, որ քաղաքը վերջնականապես կադրբեջանականացվի:

Այսօր՝ 14 տարի անց, 1980-ականներին 16 հազար քնակիչ ունեցող քաղաքում քնակվում է մոտ 2500 քնակիչ: Զաղաքի պատմական թաղամասերը շարունակում են ավերակներ հիշեցնել:

Շուշին իր ներկա վիճակով եւ ապագա ակնկալիքներով Հայաստանի պատմական քաղաքներից մեկը պիտի լինի: Հենց այդ նպատակամղումով ներկայացվող ատենախոսությունը ճարտարապետական եւ քաղաքաշինական վերլուծական հիմնավոր ուղիներ է որոնում քաղաքի հետագա զարգացման եւ ռեաբիլիտացիայի համար:

Վերջին մի քանի տարիներին թե՛ անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության, թե՛ մի շարք այլ կազմակերպությունների կողմից քաղաքի ամբողջական կամ մասնակի վերակառուցման բազմաթիվ փորձեր են արվել: Դրանցից են 1998 թվականին նախագծված Շուշի քաղաքի գլխավոր հատակագիծը (հեղինակներ՝ Ս. Ամիրադյան, Ս. Զալաշյան) եւ 2003 թվականից սկսված Շուշի բերդաքաղաքի պատմամշակութային ժառանգության ուսումնասիրման եւ գնահատման ծրագիրը (նախածեռնող՝ «Շուշի» բարեգործական հիմնադրամ): Կառավարությունը պատրաստվում է առաջիկա տարիներին թե՛ «Հայաստան» համահայկական հիմնադրամի, թե՛ այլ կազմակերպությունների միջոցներով ավելի շոշափելի վերականգնողական աշխատանքներ իրականացնել քաղաքի համընդհանուր վերածննդի համար: Սպասվում է քաղաքի համար ավելի հիմնավոր եւ օպերատիվ նախագծերի մշակում, որոնց համար կարիք է լինելու հարստացնել ելակետային նյութերը:

Շուշի քաղաքի պատմության եւ ճարտարապետության մասին լիարժեք գիտական աշխատություններ չկան: Այդպիսի աշխատանքի փորձեր են արվել, Շչորս Դավթյանի եւ Շահեն Մկրտչյանի հեղինակած «Ողբերգական ճակատագիր ունեցող քաղաք՝ Շուշի» գրքում եւ Մանվել Սարգսյանի «Ակնարկներ Շուշիի քաղաքաշինության պատմությունից» մենագրությունում: Վերջինս հայ ուսումնասիրողների կողմից մինչ այսօր հրատարակված՝ Շուշիի քաղաքաշինական զարգացման ուսումնասիրման միակ փորձն է:

Աղյուսակի մեջ ներկայացված են հիմնականում 2004-2006 թվականներին «Շուշի» հիմնադրամի կողմից նախաձեռնված և «Ռոբերտ Պողոսյան և որդիք» հիմնադրամի նյութական աջակցության շնորհիվ իրականացված չափազանց անապահով աշխատանքների նյութերը:

Պատմական և փոքր քաղաքների ռեաբիլիտացիայի միջազգային փորձի ուսումնասիրման և նվիրված Մոսկ, Կոնստանդնուպոլիս, Ռոջանի տեսական աշխատությունները:

Սակայն Շուշի քաղաքի դերի և նշանակության անկապ պայմաններում՝ քաղաքի հիմնադրման, զարգացման, անկման ու ներկա պահին քաղաքի առջև ծառայած խնդիրները դեռևս պատշաճ խորությամբ ուսումնասիրված չեն:

Ատենախոսության նպատակը: Ատենախոսության նպատակն է Շուշի քաղաքի պատմական և քաղաքաշինական զարգացման ընթացքի համակողմանի ուսումնասիրության հիման վրա առաջարկել քաղաքի ռեաբիլիտացիայի տեսական դրույթներ:

Ատենախոսության խնդիրները: Առաջարկված նպատակից ելնելով՝ ուսումնասիրության առարկան են եղել հետևյալ խնդիրները.

- պարբերացնել Շուշիի քաղաքաշինական զարգացման փուլերն ըստ ժամանակաշրջանների,
- ուսումնասիրել գոյություն ունեցող քաղաքի հատակագծային և ճարտարապետական հորինվածքի առանձնահատկությունները՝ ըստ դասակարգված ժամանակաշրջանների,
- բացահայտել Շուշիի քաղաքաշինական, հատակագծային և ճարտարապետական ոճական զարգացման օրինաչափությունները,
- մշակել գիտականորեն հիմնավորված հանձնարարականներ Շուշիի քաղաքաշինական և ճարտարապետական ռեաբիլիտացիայի համար:

Ատենախոսության առարկան: Ուսումնասիրության առարկան Շուշիի քաղաքաշինական զարգացման ընթացքն է:

Ուսումնասիրության սահմանները: Ուսումնասիրության ժամանակային սահմանները 18-րդ դարի երկրորդ կեսից մինչև մեր օրերն են: Այդ ժամանակահատվածն ընդգրկում է Շուշիի՝ որպես քաղաք ձևավորման և կայացման ողջ ընթացքը:

Հաշվի առնելով Շուշի քաղաքի պատմության, հատկապես քաղաքաշինական ու ճարտարապետական զարգացման ընթացքի ոչ հիմնավոր ուսումնասիրված լինելը և դրա օրախնդիր կարելությունը՝ փորձ է արված այն ներկայացնել ամենայն մանրամասնությամբ:

Ջենսվել և նմանատիպ խնդիրներ տարածաշրջանի մի շարք քաղաքներում (Գորիս, Նոր Բայազետ, Մեղրի):

Ուսումնասիրության մեթոդիկան: Մեթոդիկան հիմնված է հայրենական և միջազգային պատմականորեն ձևավորված փոքր քաղաքների զարգացման փորձի վրա:

Ուսումնասիրության մեջ կիրառվել են համագիտական մեթոդներ՝ փորձի վերլուծությունը և ընդհանրացումը, տիպաբանական բնութագրումները:

Ջենսվել են քարտեզագրական նյութեր, տեղագրական հանույթներ և տեղում կատարված ուսումնասիրություններ՝ ստեղծելով փաստագրական հենք:

Աշխատանքում օգտագործված են հայկական, աղբյուրական և այլ պահպանված պահպանված արխիվային փաստաթղթեր և լուսանկարներ:

Աշխատանքը կատարված է համակարգչային AutoCad և Corel Draw ծրագրերով:

Ատենախոսության նորույթը: Ատենախոսությունում առաջին անգամ.

- հիմնավորված է Շուշիի քաղաքաշինական զարգացման խորը և ամբողջական ուսումնասիրության ահրաժեշտությունը,
- վեր են հանված Շուշի քաղաքի հայկական և մահմեդական մասերի հատակագծային կառուցվածքի առանձնահատկությունները և ճարտարապետագեղարվեստական արտահայտչամիջոցները,
- բացահայտված են քաղաքի քաղաքաշինական զարգացման ընթացքը և օրինաչափությունները,
- տրված են Շուշիի քաղաքաշինական ռեաբիլիտացիայի տեսական դրույթներ:

Ներկայացվում է պաշտպանության:

- Շուշիի քաղաքաշինական զարգացման փուլերի դասակարգումն ըստ ժամանակաշրջանների,
- քաղաքի հայկական և մահմեդական մասերի ճարտարապետահատակագծային հորինվածքի առանձնահատկությունները,
- քաղաքի քաղաքաշինական զարգացման առանձնահատկությունները,
- գիտականորեն հիմնավորված Շուշիի քաղաքաշինական ռեաբիլիտացիային անհրաժեշտ տեսական առաջարկություններ:

Ատենախոսության ներդրումը: Ուսումնասիրության արդյունքները ներդրվել են «Շուշի» քարտեզագրական հիմնադրամի «Շուշի քաղաքաշինական պատմամշակութային ժառանգության ուսումնասիրման ու գնահատման ծրագրի» (2005-2006 թթ.) մշակման և իրականացման գործում:

Ատենախոսությունում ներկայացված մի շարք դրույթներ զեկուցվել են «Մշակութային հետազոտությունները սահմանային տարածքներում» գիտաժողովում (Երևան, 2006 թ.), ինչպես նաև ԵՃՇԴԳ-ի քաղաքաշինության ամբիոնում:

Ուսումնասիրության գործնական կիրառությունը: Ուսումնասիրության եզրակացությունները և արդյունքները կարող են ներդրվել որպես.

- պետական և քաղաքային իշխանությունների համար քաղաքի զարգացման հայեցակարգի մշակման ելակետ,

- Շուշիի ապագա վերակառուցող - քաղաքաշինարարների համար հենակետային կյանք.
- Շուշիի եւ, ընդհանրապես, Արցախի պատմության ու ճարտարապետության ուսումնասիրողների համար գիտական աղբյուր.
- հայ քաղաքաշինության պատմության մասին հրատարակությունների բաղկացուցիչ մաս՝ օգտագործվելով Երեւանի ճարտարապետության եւ Շինարարության Պետական Համալսարանի ճարտարապետության ֆակուլտետում ուսումնական ծրագրերի համալրման նպատակով:

Ռեաբիլիտացիայի առաջարկները կարող են կիրառվել պատմականորեն ձեւավորված մի շարք այլ քաղաքների համար նման դրույթների մշակման նպատակով:

Աշխատանքի կառուցվածքը եւ ծավալը: Առեւտրային կառուցվածքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, 120 էջից, օգտագործված 127 անու գրականության ցանկից, եւ 24 պատկերազարդ տախտակներից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գլուխ 1: «Նախախորհրդային շրջանում Շուշի քաղաքի քաղաքաշինական զարգացումը եւ կառուցապատման ճարտարապետական հորինվածքի առանձնահատկությունները»

Այս գլխում ներկայացված է Շուշի քաղաքի քաղաքաշինական զարգացման ընթացքը՝ հիմնադրման օրվանից մինչեւ խորհրդային կարգերի հաստատումը:

Քաղաքը գտնվում է երեք կողմերից անմատչելի սարահարթի վրա, որը նրան տալիս է շատ կարեւոր ռազմավարական նշանակություն: 18-րդ դարի ընթացքում Արցախում ծավալված դեպքերի ընթացքում Շուշի բերրի սեփականատեր Մելիք Շահնազար Վարանդեցին դաշն է կնքում միջին - ասիական ծագում ունեցող Փանահ խանի հետ (ըստ աղբյուրների համաձայն, հենց նա է քաղաքի հիմնադիրը): Սրանով ոչ տեղական ծագում ունեցող ցեղախմբի ներկայացուցչի հնարավորություն է տրվում ամրանալ այս անառիկ տարածքում:

Նրանք երկուսն էլ 18-րդ դարի երկրորդ կեսում հաստատվում են Շուշիի սարահարթում՝ կառուցելով իրենց ամրոց - կացարանները, որը դարձավ Շուշիի քաղաքային կառուցվածքի ձեւավորման սկիզբը, քանի որ քաղաքի զարգացումը տեղի է ունեցել այս երկու քաղաքատեղծ տարրերի շուրջը:

Քաղաքի բնակեցման հենց առաջին փուլում քաղաք տեղափոխված վերաբնակներն էին Ղազանչի գյուղի եւ Ագուլիս քաղաքի բնակիչները, որոնք իրենց բնակեցրած թաղամասերը կոչում են իրենց լքած բնակավայրերի անուններով, համապատասխանաբար՝ Ղազանչեցոց եւ Ագուլեցոց:

19-րդ դարի երկրորդ տասնամյակում՝ ռուսական տիրապետության հաստատմանը հաջորդած շրջանում, ռուս ռազմական ճարտարագետները փորձում են համակարգել քաղաքի կառուցապատումը՝ նախ մեղմացնելով փողոցների թեքությունները, ապա փորձելով մաքրել քաղաքը խարխուլ շենքերից:

Ստանալով Ղարաբաղի նահանգի վարչական կենտրոնի կարգավիճակ՝ քաղաքը զարգանում է, դառնալով Կովկասում բնակչության քանակով երկրորդ քաղաքը՝ Թիֆլիսից հետո:

Ըստ քաղաքապարսպի դարպասների տեղադրության՝ ձեւավորվում են քաղաքի բանուկ ուղղությունները: Քաղաքի արեւմտյան մասում գտնվող Էրիվանյան դարպասը՝ Ելիզավետոպոլյան դարպասին միացող եւ քաղաքի երկու մասերով անցնող ճանապարհը, արդեն ուրվագծվում է 1820-ականներին թվագրվող պահպանված տեղագրական հանույթում:

Ռուսական Ազգային ռազմապետական կենտրոնական արխիվում պահվում է «Շուշի քաղաքի գլխավոր հատակագիծը»՝ թվագրված 1853 թվականին, որը քաղաքի քաղաքաշինական իրավիճակի մասին ամենամրդջական փաստաթուղթն է: Դրանում արդեն հստակ գծագրվում են քաղաքի երկու՝ հայկական եւ մահմեդական մասերի կառուցապատման տարբերությունները:

Քաղաքի ստորին՝ մահմեդական մասը.

- ուներ խիստ ռելիեֆ,
- զբաղեցնում էր համեմատաբար փոքր տարածք,
- կառուցապատումը ավելի խիտ էր:

Քաղաքի բարձրագույն՝ հայկական մասը.

- համեմատաբար ավելի հարթ էր,
- զբաղեցնում էր սարահարթի հիմնական մասը,
- կառուցապատումը ավելի խուր էր:

Ստորին մասում բնակվում էին ոչ միայն մահմեդականներ, այլեւ ռուսներ, հրեաներ, քրդեր, ինչպես նաեւ հայեր:

19-րդ դարի երկրորդ կեսին քաղաքի հիմնական մասը կառուցապատված էր, եւ ձեւավորված էր քաղաքային կառուցվածքը՝ գործառնական գոտիները, հոգեւոր եւ հասարակական հրապարակները:

Ստորին մասում կային մի շարք առեւտրահասարակական հրապարակներ, որոնց միացնող ճանապարհները ամբողջովին պատված էին առեւտրական շարքերով: Այստեղ հստակ կերպով ձեւավորված էին պաշտամունքային (Մեդյան), առեւտրական (Չոլե) եւ վարչական (Դիվանխանա) հրապարակները:

Վերին մասում Թոփխանի կոչվող հրապարակում էին կենտրոնացված քաղաքի այդ մասի առեւտրահասարակական գործընթացները: Այս հրապարակ էին մտնում թվով հինգ փողոցներ, որոնցից չորսը շառավղածե միանում էին քաղաքի առաջնական եկեղեցիներին, մյուսը միանում էր քաղաք մտնող Էրիվանյան դարպասին:

Համեմատաբար փոքր հրապարակներ կային վերին մասում՝ եկեղեցիների առջեւում, իսկ ստորին մասում՝ աղոթատների հարեւանությամբ:

Շուշիում 19-րդ դարի ընթացքում եղել են թվով հինգ հայ առաքելական եկեղեցիներ: Դրանցից առաջինները կառուցվել են 18-րդ դարում, հիմնականում փայտից: 1816 թվականին կառուցվում է Օրիորդաց մենաստանը (Կուսանաց վանք), որը քաղաքում կառուցված առաջին քարաշեն հոգեւոր կառույցն էր: Ավելի ուշ կառուցված եկեղեցիներից են Մեղրեցոց սբ. Աստվածածին եկեղեցին (1838 թվական) եւ սբ. Հովհաննես Մկրտչի Կանաչ եկեղեցին (1847 թվականին): Ղազանչեցոց սբ. Ամենափրկիչ եկեղեցին եւ Ագուլեցոց սբ. Աստվածածին եկեղեցիները կառուցվում են նախկինում եղած փայտե եկեղեցիների տեղում 19-րդ դարի երկրորդ կեսին: 1830 թվականին Գանձասարից Շուշի է տեղափոխվում Ղարաբաղի հայկական առաջնորդարանը:

Քաղաքի ուղղափառ միակ եկեղեցին գտնվում էր Դիվանխանայի հրապարակում՝ ռուսական ռազմական շտաբի հարեանությունը: Սա ենթադրել է տալիս, որ հրապարակը ունեցել է քաղաքի վարչական կենտրոնի կարգավիճակ՝ չգտնվելով ո՛չ հայկական, եւ ո՛չ մահմեդական թաղերում:

Քաղաքում գոյություն ունեին թվով երեք մզկիթներ: Չնայած՝ թե՛ հայ, թե՛ աղոթեցանցի ուսումնասիրողները նշում են 9 մզկիթների ամկայությունը, սակայն, ըստ ամկա արխիվային կուրսերի, դրանք սկզբում երկուսն են եղել, հետո դրանց ավելացվել է եւս մեկը: Օփոթության պատճառը քաղաքում եղած մոտ 13 աղոթատների անկայությունն է, որոնք, ի տարբերություն մյուսների, միևարթներ չունեին եւ համեստ էին ճարտարապետական լուծումներով: Դրանք մանրամասն ուսումնասիրվել են եւ դասակարգվել հետեւյալ տիպերի.

- եռանավ բազիլիկատիպ,
- միանավ,
- երկդահլիճ:

Թե՛ քրիստոնեական պաշտամունքային կառույցները եկեղեցական ճարտարապետության կառույցներին հատուկ ճարտարապետական կերպար ունեին, ապա նույնը չի կարելի ասել մահմեդական պաշտամունքային կառույցների վերաբերյալ: Դրանք հիմնականում կրում էին Շուշիի քնակելի ճարտարապետության անմիջական ազդեցությունը, որոնցից միայն երկուսը՝ Վերին (կառուցումը ավարտվել է 1822 թվականին) եւ Ներքին մզկիթներն էին, որոնք թե՛ չափերով, թե՛ ճարտարապետական լուծումներով տարբերվում էին քնակելի տներից:

Շուշիի ճարտարապետական կերպարը առանձնանում է քնակելի տներով: Այն հիմնված է կրցախի ամրոց - կացարանների, մեխքական տների ու տեղական քնակելի տան ճարտարապետական ավանդույթների վրա: Դրա առանձնահատկություններից են.

- տեղական շինանյութի՝ կաթնագույն կրաքարի խառը շարվածքը,
- նմանատիպ կամարները,
- հորիզոնական պարզ գոտիները,
- մի քանի տարրերի բազմաթիվ անգամներ կիրառելը:

Ավելի ուշ կրել է քաղաքային քնակելի տան ճարտարապետական սկզբունքների ազդեցությունը՝

- ծպեղային տանիք,
- փողոցահայաց մշակված ճակատներ,
- սրբատաշ տարրերի կիրառում:

Վերոնշյալ ճարտարապետական լուծումները հանդիպում են նաեւ քաղաքացիական շինություններում (ռեալական դպրոց, ժամհարյանների հիվանդանոց եւ տուն, Մարիամյան օրհորդաց դպրոց, քաղաքային ուսումնարան, Խանդամիրյանցի թատրոն, հոգեւոր տպարան, բազմաթիվ քարավանատներ):

Շուշի քաղաքի զարգացման ընթացքի լավագույն շրջանը (քնակելության քանակով եւ կառուցապատմամբ) 20-րդ դարի սկիզբն է: 1870-ականները Շուշի քաղաքը Կովկասում մեծությամբ երկրորդ քաղաքն էր՝ 20 հազար քնակելությամբ (Թիֆլիսինը՝ 65 հազար): 1890-ականներին քաղաքն արդեն զիջում էր նաեւ Բաքվին եւ ուներ մոտ 27 հազար քնակիչ:

1912 թվականին քաղաքի քնակելությունը հասնում է 42 հազարի: Սա այն դեպքում, երբ 1905 թվականին արդեն տեղի էին ունեցել առաջին քախումները քաղաքի հայ եւ թուրք քնակելության միջեւ, որի արդյունքում հրդեհվել էին բազմաթիվ շինություններ, այդ թվում՝ Խանդամիրյանցի թատրոնը:

Չնայած՝ Շուշիի պատմության ընթացքում հայերը կազմում էին քաղաքի քնակելության կեսից ավելին, 20-րդ դարի երկրորդ տասնամյակում փոփոխվում է քնակելության կազմը: Վերոնշյալ դեպքերի եւ Բաքվի նավթային համալսարանի հետեւանքով, բազմաթիվ հայեր արտագաղթում են, որի արդյունքում քաղաքում գերիշխող է դառնում մահմեդական միջինասիական ծագում ունեցող քնակելությունը:

1920 թ. մարտի 22-ին եւ 23-ին իշխանության եկավ մուսավաթական կառավարությունը, որի ծրագրած հարձակումների արդյունքում հրդեհվեցին եւ ամայի տարածքներ դարձան Շուշի քաղաքի վերին՝ հայկական թաղամասերը:

Չարկ է նշել, որ այս ժամակաշրջանում է տեղի ունեցել Շուշիի հատակագծային հորինվածքի, գործառական գոտիների, կերպարի ձեւավորումը, որպես կուռ, ամրոցական եւ կենսունակ քաղաքային կառուցվածք՝ վերջինիս բնորոշ բոլոր անհրաժեշտ տարրերով: Քաղաքային համընդհանուր համակարգի կարեւորագույն հատկանիշն է քաղաքային մեկ միասնական օրգանիզմի մաս կազմող երկու հատվածների՝ հայերով եւ մահմեդականներով քնակելված տարածքների՝ միմյանցից գրեթե անկախ գոյությունը:

Քաղաքի զարգացման մինչ խորհրդային կարգերի հաստատման ժամանակաշրջանը բաժանվել է հետեւյալ փուլերի՝

- նախառուսական շրջան՝ 1750-1813 թթ.,
- ռուսական շրջան՝ 1813-1920 թթ.,
 - կայացման շրջան՝ 1813-1850 թթ.,
 - զարգացման շրջան՝ 1850-1905 թթ.,
 - անկման շրջան՝ 1905-1920 թթ.:

Գլուխ 2: «Խորհրդային եւ հետխորհրդային շրջաններում Շուշի քաղաքի կառուցվածքային եւ հորինվածքային փոփոխությունները»

Այս գլխում ներկայացվում են խորհրդային կարգերի հաստատմանը հաջորդած շրջանում Շուշիի կառուցվածքային եւ կերպարային փոփոխությունները:

Այս ժամանակահատվածը առանձնանում է նախորդ գլխում նկարագրվածից նրանով, որ 1920 թվականի դեպքերի արդյունքում, քաղաքի վերին՝ հայկական մասը, գրեթե ամբողջությամբ հրդեհվել ու դադարել է գոյություն ունենալուց:

1921 թվականին, Շուշին բռնակցվում է Խորհրդային Աղբյուրանին: Ստեղծվում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզ, որի մարզկենտրոնն է դառնում Շուշի քաղաքը: Ընդամենը մի քանի տարի անց մարզկենտրոնն է դառնում ռուս ռազմական ճարտարագետների կողմից 19-րդ դարում նախկին Վարակն (Խանքենդի) գյուղի տեղում կառուցված նորաստեղծ Ստեփանակերտ քաղաքը:

Մինչ երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը քաղաքում աշխատանքներ գրեթե չեն իրականացվել: Ավերակ վիճակում էր քաղաքի գրեթե կեսից ավելին: 1925 թվականին քաղաքն ուներ մոտ

5000 բնակիչ, այն դեպքում, երբ դրանից 10 տարի առաջ քաղաքն ուներ 40 հազարից ավելի բնակչություն:

1952 թվականին մշակվում է Շուշի քաղաքի նոր գլխավոր հատակագիծ, որով նախատեսվում էր այն դարձնել առողջարանային քաղաք:

Ցավոք, այդ եւ մյուս քաղաքաշինական նախագծերը գտնվում են աղբբեջանական արխիվներում եւ անհասանելի են ուսումնասիրության համար: Սակայն պահպանված նյութերը հնարավորություն են տալիս ներկայացնել 1950-ականներից իրականացված քաղաքաշինական լայնածավալ աշխատանքները: Դրանց արդյունքում քաղաքի տարբեր մասերում կառուցվել են տիպային շինություններ, որոնք աղետ չունեն քաղաքի մինչ այդ եղած ճարտարապետական կերպարի հետ:

Դա հատկապես իր արտահայտությունն է գտել քաղաքի վերին՝ նախկին հայկական թաղամասում: Այս մասում պահպանվել են պատմական կառուցապատման հատուկներ շինություններ, որոնք չէին կարող պատկերացում տալ այստեղ եղած երբեմնի ճարտարապետական միջավայրի մասին: Բազմաբնակարան բազմաթիվ շենքեր են կառուցվել քաղաքի տարբեր մասերում: Սակայն եթե մահմեդական ստորին մասում դրանք հիմնականում չեն խաթարել թաղամասերի կառուցվածքը, ապա հայկական մասում դրանք աղավաղել են քաղաքի այս մասի թե՛ կառուցվածքը (փողոցային ցանց, հրապարակներ), թե՛ ճարտարապետական կերպարը:

Քաղաքի փողոցների լայնացման եւ վերակառուցման արդյունքում քաղաքային փողոցների մի մասը վերացել է կամ փոխվել են դրանց ուղղությունները: Իրականացվել են նաեւ փողոցների թեքությունների նվազեցում, ինչպես նաեւ ասֆալտապատվել են փողոցներ, որոնք նախապես կրաքարե խոշոր եւ միջին մեծության քարերով էին սալարկված, որի արդյունքում խաթարվել է քաղաքի հիմնական փողոցների պատմական միջավայրը: Մնացյալ փողոցները, որոնք խիստ թեքությունների հետեւանքով չէին համապատասխանում արդի պահանջներին, պահպանվել են, եւ այսօր պատկերացում են տալիս դրանց երբեմնի միջավայրի մասին:

Նախկինում մահմեդականներով բնակեցված տարածքում կառուցված նորակառույցները քանակությամբ քիչ էին եւ կրկնում էին կառուցապատման հին ուրվագիծը: Այստեղ եղած պաշտամունքային կառույցներին տրվել են նոր գործառական նշանակություններ, որի հետեւանքով քաղաքի գրեթե բոլոր մահմեդական պաշտամունքային կառույցները պահպանվել են. այն պարագայում, երբ ավերվել են քաղաքի միակ ուղղափառ քրիստոնեական եկեղեցին եւ հայկական առաքելական եկեղեցիներից երեքը:

Քաղաքի նախկին հստակ, միմյանց միահյուսված գործառական գոտիների համակարգը կազմալուծվել է, հասարակական կենտրոններից պահպանվել են միայն երկուսը: Քաղաքի վերին մասում հասարակական հրապարակները վերացել են: Այստեղ գտնվող նախկին խոշոր ուսումնական շինություններով կառուցապատված թաղամասում նոր ուսումնական հիմնարկություններ ստեղծելու փոխարեն, նույնատիպ հիմնարկություններ են կառուցվել քաղաքի ստորին մասում:

Պաշտամունքային կառույցների պարագայում, տեղի է ունեցել ցայտուն եւ հստակ տարբերակված մոտեցում: Կուսանաց վանքը քանդվել է, սակայն տեղում որեւէ բան չի կառուցվել: Հայտնի է, որ այն

մասնակիորեն կանգուն էր մինչեւ 1960-ական թվականները: Ազուլեցոց եկեղեցու տեղում կառուցվել է տիպային դպրոց 1970-ական թվականներին: Մեղրեցոց սբ. Աստվածածին եկեղեցին մասնակիորեն քանդվել է, որի խորանը եւ կից արսիղները ծառայել են այլ նպատակի: Պահպանվել են միայն Ղազանեցոց եւ սբ. Հովհաննես Մկրտչի Կանաչ եկեղեցիները:

Պահպանված քրիստոնեական կառույցները խորհրդային տարիներին շրջապատվել են բազմաբնակարան շենքերով՝ զրկվելով քաղաքի տարբեր հատվածներից տեսանելի լինելու հնարավորությունից:

1977 թվականին Շուշի քաղաքի տարածքում ստեղծվում է պատմական արգելոց, որն ընդգրկում էր միայն քաղաքի ստորին՝ նախկին մահմեդական թաղը:

Փաստորեն, խորհրդային Աղբբեջանի տիրապետության տարիներին խաթարվել է քաղաքի ինքնարուխ կերպով ձեւավորված կառուցապատումը, փողոցների եւ շենքերի միջեւ եղած հարաբերությունը՝ մասշտաբը: Այս ամենի հիմքում եղել են ոչ միայն քաղաքական եւ տնտեսական պատճառներ, (ինչպիսին եղել են բազմաթիվ այլ քաղաքներում), այլեւ ազգամիջյան անհանդուրժողականության առկայության պայմաններում փորձ է արվել վերացնել քաղաքի հայազգի բնակիչների թողած պատմաճարտարապետական ժառանգությունը:

Շուշի քաղաքի ազատագրումից հետո իրականացված աշխատանքներից հատկապես արժանահիշատակ է քաղաքի՝ 1998 թվականին հաստատված գլխավոր հատակագիծը (*հեղինակներ Ս. Ամիրադյան, Ս. Ելաշյան*), ուր ներկայացված են քաղաքի վերակենդանացման մի շարք առաջարկություններ: Նրանում լավագույնս արտացոլված են քաղաքի առջեւ ծառայած տեխնիկական խնդիրները, ու մասնագիտական բարձր մակարդակով տրված են դրանց փուլային լուծման տարբերակներ: Սակայն, նախագծի մշակման ժամանակ քաղաքի պատմությունը, քաղաքաշինական զարգացումը եւ ճարտարապետական ժառանգությունը դեռեւս ուսումնասիրված չէին եւ իրենց լիարժեք արտահայտությունը չէին գտել քաղաքի զարգացման ուղղված առաջարկներում:

Այդ նախագծով նախատեսվում էր քաղաքի բնակչությունը հասցնել 15 հազարի: Նոր ճանապարհներ էին նախատեսվում, որոնք կապելու էին քաղաքի վերին եւ ստորին մասերը: Գլխավոր հատակագիծում ամրագրված էր «Շուշի» պատմական արգելոցի ստեղծումը:

Վերլուծելով նշված ժամանակաշրջանը՝ այն պարբերականացվել է հիմնականում երեք ժամանակահատվածների, դրանք են.

- ավերման շրջան՝ 1920-1945թթ.,
- «վերակառուցման» շրջան՝ 1945-1992 թթ.
- Ազատագրումից հետո՝ 1992 թվականից մինչ օրս:

Գլուխ 3: «Շուշի քաղաքի քաղաքաշինական ռեաբիլիտացիայի տեսական խնդիրները»

Քաղաքի ռեաբիլիտացիան ենթադրում է քաղաքի պատմական միջավայրերի եւ շինությունների նոր գործառական նշանակությամբ կիրառում՝ օգտագործելով գոյություն ունեցող կառույցները: Այն ենթադրում է նաեւ տարատեսակ ծառայությունների (գրոսաշրջության եւ մշակութային) մատուցման համար համաքաղաքային նշանակության տարածքների, թաղամասային բնակելի կառուցապատման համար

անհրաժեշտ հանգստի գոտիներ ձեւավորում՝ աշխատատեղերի ստեղծման եւ տեղական արհեստների վերակենդանացման հիման վրա:

Առաջին երկու գլուխներում, Շուշիի քաղաքաշինական զարգացման փուլերի դիտարկման արդյունքում, բացահայտվել է, որ քաղաքի ճարտարապետահատակագծային կառուցվածքը իր ամենամրոցական վիճակում եղել է 19-րդ դարի երկրորդ կեսին: Ուստի այդ փուլը հիմք է հանդիսացել քաղաքի ռեաբիլիտացիայի խնդիրներն առաջադրելու համար:

Վերլուծվել են քաղաքի առջեւ ներկայումս ծառայած խնդիրները ու կարելու է են քաղաքում նոր աշխատատեղերի ստեղծման անհրաժեշտությունը, որի արդյունքում առաջարկվում է քաղաքի տնտեսական զարգացման առաջնային խնդիրների շարքին դասել.

- գոտաշրջության զարգացումը,
- առողջարանային հզորությունների վերականգնումը,
- փոքր արհեստագործական արտադրամասերի ստեղծումը,
- ուսումնական տարատեսակ հիմնարկությունների հիմնումը,
- մշակութային համահայկական տարբեր միջոցառումների անցկացումը,
- Արցախի թեմին կից առաջնորդանիստ կենտրոնի ստեղծումը:

Հաշվի առնելով քաղաքի բնական պայմանները եւ սահմանափակ տարածքը, քաղաքում արտադրական խոշոր ձեռնարկությունների գոյությունը բացառվում է:

Վերոնշյալ ոլորտներից յուրաքանչյուրի, հատկապես առաջինի, զարգացման համար անհրաժեշտ է քաղաքի պատմական կառուցապատման վերստեղծումը: Այդ իսկ պատճառով կարելու է են հետեւյալ գործոնները, որոնք դուրս են բերվել պատմական կառուցապատման կայացման ընթացքի ուսումնասիրման ժամանակ.

- քաղաքի լանդշաֆտի ազդեցությունը փողոցային ցանցի վրա, որի պատճառով կազմավորվել է գծային եւ ճառագայթաձեւ փողոցային ցանց,
- ռազմավարական նկատառումներից ելնելով՝ քաղաքային դարպասների (Երիվանի, Ելիզավետոպոլի, Ամարասի եւ Մխիթարաշենի) տեղադրությունը եւ ըստ այդմ՝ ռազմական հենակետերի ստեղծումը
- ելնելով քաղաքի բանուկ ուղղություններից՝ ձեւավորվում են քաղաքի ռազմավարական դարպասները (Երիվանի եւ Ելիզավետոպոլի ուղղություններով),
- քաղաքի գործառական գոտիների կայացումը եւ ձեւավորումը, որոնք ունեն գծային զարգացում փողոցների ուղղությամբ,
- պաշտամունքային շինությունների եւ դրանց կից հրապարակների գծային կառուցվածքը:

Քաղաքի՝ համեմատաբար լավ պահպանված ստորին մասում անհրաժեշտ են վերականգնողական աշխատանքներ, այն դեպքում երբ քաղաքի վերին մասում ամբողջովին ավերված թաղամասերը կարիք ունեն վերստեղծման:

Քաղաքի նախկին գործառական գոտիների վերակառուցման համար առանձնացվել են հետեւյալները գոտիները.

- ուսումնական գոտին՝ Ռեալական դպրոցը եւ շրջակայքը,
- հոգեւոր կենտրոնը՝ Ղազանչեցոց եկեղեցու շրջակայքում,
- առեւտրահասարակական՝ պատմական Թուփխանի եւ Մեյրանի հրապարակները,
- վարչական գոտի՝ պատմական Դիվանխանայի հրապարակի շրջակայքում:

Անհրաժեշտ է խորհրդային տարիներին քաղաքում ստեղծված առողջարանային հզորությունների վերականգնում՝ մասնավորապես կենտրոնացնելով դրանք Կանաչ ժամի հարեանությամբ եւ Ջրղուզի սարահարթից արեւմուտք:

Քաղաքի հատակագծային կառուցվածքում մի շարք հրապարակներ ու փողոցներ կորցրել են իրենց պատմական նշանակությունը: Կարելու է դրանց դերը, քաղաքի համընդհանուր համակարգում՝ առաջարկվում է դրանց ռեաբիլիտացիայի գործում կարելու է.

- պատմական կառուցապատման համալիր վերստեղծման անհրաժեշտությունը,
- քաղաքի դոմինանտների (պաշտամունքային, հասարակական կառույցների) տեսողական ընկալման անհրաժեշտությունը,
- պատմականորեն առաջացած հետիոտն շարժման համակարգի վերակենդանացումը,
- քաղաքում մանր ճարտարապետական ձեւերի վերստեղծումը:

Առեւտրապատման մեջ վեր են հանվել, քաղաքի կառուցապատման մի շարք դրվագներ, պահպանականորեն ձեւավորված մի շարք քաղաքային միջավայրեր եւ շինություններ, որոնք քաղաքի պատմաճարտարապետական հորինվածքում ունեն կարելու է նշանակություն (Ռեալական դպրոցի շրջակայքը, Մեյրանի հրապարակը, Խանի աղջկա պալատի շրջակայքը, Աղամյան փողոցը): Այդ նպատակով չափազրվել են 250 շինություններ, որոնց թվում են բերդապատկան տարածքում գտնվող գրեթե բոլոր պատմական եւ ճարտարապետական արժեք ունեցող շինությունները: Դրանց հիմնական մասը բնակելի տներ են, որոնք վերջին 15 տարիներին՝ պատերազմին հաջորդած շրջանում, զգալի չափով տուժել են: Ուսումնասիրության արդյունքում, պարզվել է, որ քաղաքի պատմական շինությունների պահպանվածությունը բաշխվում է այսպես.

- վերականգնման ենթակա համեմատաբար բարվոց վիճակում (մոտ 60%),
- ավերված, վերստեղծման ենթակա (մոտ 30%),
- ավերված (10%):

Առաջարկվում է իրականացնել դրանց վերականգնումը՝ հաշվի առնելով պահպանված շինությունների՝

- ֆիզիկական վիճակը,
- պատմաճարտարապետական արժեքը,
- դրանց շրջակա պատմական միջավայրի պահպանվածության չափը:

Շենքերի ռեաբիլիտացիան անհրաժեշտ է իրականացնել, արդեն հայտնի, հետեւյալ մեթոդներով.

- պահպանված հատվածների կոնսերվացիա,

- մասնակի վերակառուցում,
- ամբողջական վերականգնում:

Պաշտամունքային կառույցների դեպքում առաջարկվել է, կարելի է դրանք դերը քաղաքի համայնապատկերում, իրականացնել ուրվագծային վերականգնում: Նշված կառույցների թվում կան պաշտամունքային շինություններ, որոնք 1970-ական թվականներին շրջապատվել են բազմաբնակարան շինություններով: Կարելի է անկա պաշտամունքային կառույցների միջավայրի պահպանումը, առաջարկվում է:

- ապամոնտաժել այն շինությունները, որոնք խոչնդոտում են քաղաքային հորինվածքի դոմինանտներին,
- դրանք մասնակիորեն վերակառուցել՝ համապատասխանեցնելով քաղաքի կերպարին և կառուցապատման համաչափությանը:

Այս գլխում ներկայացվել են նաև մի շարք գործնական առաջարկություններ: Մասնավորապես՝ մատնանշվում են քաղաքի կառուցապատման առանցքային դրվագներ, որոնք վերականգնման դեպքում հնարավոր է ստեղծել պատմական կառուցապատման ուրույն նախատիպ՝ քաղաքի ապագա զարգացման ընթացքում նմանատիպ նախագծերի մշակումը ապահովելու համար:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՃՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՈՒՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հետազոտվել և դասակարգվել են Շուշի քաղաքի քաղաքաշինական զարգացման ընթացքը և առանձնացվել են հետևյալ փուլերը.
 - I. Նախառուսական շրջան՝ 1750-1813 թթ.,
 - II. Ռուսական շրջան՝ 1813-1920 թթ.,
 - կայացման շրջան՝ 1813-1850 թթ.,
 - զարգացման շրջան՝ 1850-1905 թթ.,
 - անկման շրջան՝ 1905-1920 թթ.,
 - III. Խորհրդային շրջան 1920-1992 թթ.,
 - ավերման շրջան՝ 1920-1945թթ.,
 - «վերակառուցման» շրջան՝ 1945-1992 թթ.,
 - IV. Ազատագրումից հետո՝ 1992 թվականից մինչ օրս:
2. Պարզվել է, որ քաղաքն իր գոյության ընթացքում ամենամոռոցական և կայացած վիճակում եղել է 19-րդ դարի երկրորդ կեսին: Այդ ժամանակաշրջանում արդեն ձևավորվել էին քաղաքի գործառական գոտիները, փողոցային ցանցը, քաղաքի երկու մասերում ձևավորվել էին քաղաքային հասարակական հրապարակները, ինչպես նաև կայացել էր Շուշիին հատուկ քաղաքային կերպարը:
3. Բացահայտվել է, որ Շուշիի քաղաքաշինական զարգացումը տեղի է ունեցել երկու տարբեր հորինվածքային տարրերի շուրջ: Զաղաքի առաջին բնակելի թաղամասերը կազմավորվել են մեխքական և խանական ամրոց - կացարանների շուրջը: Սրա արդյունքում քաղաքի միասնական համակարգում ստեղծվել են միմյանցից անկախ երկու թաղամասեր՝ յուրաքանչյուրն իր ուրույն հորինվածքով:
4. Վեր են հանվել Շուշի քաղաքի երկու՝ վերին և ստորին մասերի հատակագծային կառուցվածքի տարբեր դրսևորումները: Վերին՝ հայերով բնակեցված հատվածում, փողոցային ցանցը և կառուցապատումը համեմատաբար կանոնավոր էր և նոսր: Այն

դեպքում, երբ քաղաքի ստորին՝ մահմեդական մասում փողոցների ցանցը անկանոն էր, իսկ բնակելի կառուցապատումը՝ խիտ:

5. Պարզվել է, որ Շուշիի ճարտարապետական կերպարը ձևավորվել է ըստ Արցախի ամրոց - կացարանների, մեխքական տների ճարտարապետական ավանդույթների: Ավելի ուշ կրել է քաղաքային բնակելի տան ճարտարապետական սկզբունքների ազդեցությունը: Զաղաքի ճարտարապետական կերպարին հատուկ են.
 - կաթնագույն կրաքարի խառը և սրբատաշ շարվածքը,
 - հորիզոնական պարզ գոտիները և քիվերը,
 - նույնատիպ տարրերի կրկնումը,
 - կրկնվող կամարները և լուսամուտի ճաղերը:
6. Բացահայտվել է, որ Խորհրդային տարիների մյուս պատմական քաղաքների վերակառուցման աշխատանքների նման, Շուշիում նույնպես, վերակառուցման աշխատանքներում տեղի է ունեցել քաղաքային կառուցվածքի և կերպարի ձևախեղում: Այդ ժամանակաշրջանում տեղի է ունեցել քաղաքաշինական նախկին հստակ համակարգի կազմալուծում և քաղաքային նոր կերպարի ձևավորում: Շուշիի դեպքում, այն ունեցել է միակողմանի դրսևորում՝ չունենալով համարժեք դրսևորում քաղաքի նախկին մահմեդական և հայկական մասերում:
7. Ռեսուրսափության արդյունքում, պարզվել է, որ քաղաքի ռեաբիլիտացիայի հիմնահարցերի շարքում տնտեսական առաջնային ուղղուները, հորինվածքային խնդիրները և քաղաքական նկատառումները ունեն կարելի դերակատարություն, հաշվի առնելով Շուշիի դերը Ղարաբաղի զարգացման համընդհանուր համակարգում: Ելնելով սրանից, առաջարկվում է, քաղաքի զարգացման հիմքում դնել քաղաքի պատմականորեն ձևավորված կառուցվածքի և կերպարի վերստեղծման անհրաժեշտությունը, կարելի է քաղաքի տնտեսական զարգացման գործում զբոսաշրջության ունեցած դերը:
8. Առաջարկվում է քաղաքի ապագա վերակառուցման գործում կարելի է պատմականորեն առաջացած գործառական գոտիների դերն ու նշանակությունը՝ հատկապես, խնդիր դնելով վերստեղծել հետևյալ պատմական գոտիները.
 - կրթական՝ Ռեալական դպրոցի շրջակայքում,
 - առևտրական՝ Թովիսանի և Մեյդանի հրապարակները,
 - պաշտամունքային՝ Մեյդանի հրապարակում և Ղազանեցոց եկեղեցու շրջակայքում,
 - վարչական՝ Դիվանխանայի հրապարակում:
9. Նպատակահարմար է քաղաքի պատմականորեն ձևավորված հորինվածքում, փողոցային ցանցին և հրապարակներին վերապահված դերից ելնելով, քաղաքում վերակենդանացնել պատմականորեն ձևավորված ուղղությունները և վերականգնել պատմական հասարակական հրապարակների դերը՝ կարելի է 1920 թվականի դեպքերի արդյունքում վերացած փողոցներ և հրապարակների նշանակությունը:

Ատենախոսության առանձին հարցերի վերաբերյալ հեղինակի գիտական հրապարակումները

1. «Շուշիի պատմական ջրամատակարարման համակարգը եւ աղբյուրները», ԵՃՇԳԳ-ի գիտական աշխատությունների ժողովածու, հատոր I (23), Երեւան 2005թ., էջ 86-89,
2. «Շուշիի բաղնիքի պատմաճարտարապետական առանձնահատկությունները» ԵՃՇԳԳ-ի գիտական աշխատությունների ժողովածու, հատոր III (25), Երեւան 2005թ., էջ 39-41,
3. «Շուշի քաղաքի կառուցվածքի փոփոխությունները 1920-1992 թվականներին», համահեղինակ՝ Նուրե Զիլինգարյան, Հայաստանի Շինարարների տեղեկագիր, հատոր 11-12, Երեւան 2006թ., էջ 72-74:

Տարխատ Սետրոսյան

**Проблемы градостроительного развития и реабилитации Шуши
Резюме**

Город Шуши, бывший крупным административным, военным, торговым и культурным центром Кавказа до сих пор не был предметом специального исследования. Отсутствие научных работ армянских специалистов, посвященных его истории, архитектуре и градостроительству, (наличие трудов азербайджанских исследователей имеющих одностороннюю направленность лишает их научной ценности) предопределили цель настоящего исследования.

Целью диссертационной работы является разработка теоретических положений по реабилитации города на основе исследования процесса исторического и градостроительного развития города Шуши.

В диссертации представлены история основания, развития и упадка города Шуши и выявлены современные градостроительные проблемы его реабилитации.

В первой главе рассмотрены основания города и вопросы его развития в период с XVIII-го века до 1920 года. Этот период характеризуется формированием композиционного плана Шуши, функциональных зон, становлением каркаса его планировочной структуры. В Шуши, в отличие от ряда других городов кавказского региона, в процессе формирования города произошло четкое разграничение армянонаселенных и мусульманских территорий. Находясь в единой городской структуре, они не имели общих общественно-торговых территорий взаимосвязанной системы. Используя традиции армянского строительного искусства и архитектуры, застройщики города Шуши сумели создать единый городской ансамбль с различным функциональным и религиозным содержанием.

Во второй главе отображены деградация планировочной и объемно-пространственной структуры города Шуши которая, с 1920 года является следствием межнациональных столкновений. В годы правления Советского Азербайджана, в результате непродуманной застройки города были нарушены масштабы улиц и зданий. В основе всего этого лежали не только политические и экономические причины (как это происходило в многочисленных других городах), но стремление к уничтожению историко-архитектурного наследия армянского населения.

В третьей главе представлены научно-обоснованные рекомендации по реабилитации архитектурно-планировочного облика города. Предлагается в основе развития города Шуши принять его планировочную структуру сформировавшуюся в начале 20 годов XX века. Даются рекомендации по реабилитации исторических зон города и реконструкции отдельных зданий и сооружений, культовых памятников в том числе памятников мусульманской архитектуры.

Sarhat Petrosyan

Issues on Urban Development and urban rehabilitation of Shoushi
Summery

The goal of thesis is to create theoretical propositions of rehabilitation of the Shoushi city by observing the historical and urban development of city.

The thesis introduces the history of foundation, development and collapse of Shoushi town, as well as describes the current situation and discusses outstanding urban rehabilitation problems.

Though Shoushi has formerly been one of the major military, trades, administrative and cultural centers of Caucuses, but it hasn't been comprehensively studied. There are practically no complete publications by Armenian specialists on the history or architecture or urban development of Shoushi, while Azerbaijani investigators have produced numerous publications on above mentioned issues. Unfortunately, these publications have no scientific value because of their narrowness.

The first section introduces the history of Shushi foundation and development processes since 18th century up to the beginning of the 20th century. During this period the general layout of Shoushi was developed, as well as the formation of operational zones and the image of the town as a strong, comprehensive and sustainable structure with all demanded attributes. Unlike other Caucasian towns from the very foundation Shoushi was divided into two separate parts, one inhabited by Armenians and the second – by Muslims. Being a part of the single urban structure these two districts didn't have integrated social and commercial structures. Bearing the tradition of the same architectural style and constructing traditions, they have differed by urban structure and style.

The second section introduces architectural and construction distortions conducted after the international dissention in 1920. During the Governance of Soviet Azerbaijan, the regular development of the town was violated, as well as the relationship between the streets and houses. It has had not only political and economical reasons, (as in many other towns). It's also the result of international irreconcilability, when one part of the citizens tried to exterminate all historical-architectural exterminate heritage of former citizens.

The third section present some theoretical proposals directed to the solution of current urban development problems and constrain of Shoushi. All these proposals suit to the structure and style of the most comprehensive period of the urban development of Shoushi and its historical-architectural image. There are also some theoretical and practical recommendations that can be used in Shoushi's future development.

ՀՀ Ազգային գրադարան



NL1763000

Sarkis Petrosyan
Issues on Urban Development and Urban Rehabilitation of Shoushi
Summary

The goal of this book is to create theoretical propositions of rehabilitation of the Shoushi city by covering the historical and urban development of the city. The thesis introduces the history of formation, development and collapse of Shoushi town, as well as describes the current situation and discusses outstanding urban rehabilitation problems.

Though Shoushi has formerly been one of the major military, trade, administrative and cultural centers of Caucasus, but it hasn't been comparatively studied. There are practically no complete publications by Armenian specialists on the history or architecture or urban development of Shoushi, while Azerbaijani investigators have produced numerous publications on above mentioned issues. Unfortunately, these publications have no scientific value because of their narrowness.

The first section includes the history of Shoushi foundation and development processes since 19th century up to the beginning of the 20th century. During this period the general layout of Shoushi was developed, as well as the formation of residential zones and the image of the town as a strong administrative and economic structure with its own social structure. Unlike other Caucasian towns from the very foundation Shoushi was divided into two separate parts, one created by Armenians and the second - by Muslims. Being a part of the single urban structure these two districts don't have independent social and commercial structure, having the tradition of the same architectural style and constructing methods, they have differed by urban structure and style.

The second section includes architectural and construction decisions conducted after the earthquake devastation in 1920. During the devastation of Soviet Azerbaijan the urban development of the town was stopped, as well as the architectural structure of Shoushi and around it has had not only positive and economic nature, like many other towns. It's also the result of international expediency, which was part of the direct need to intermediates of historical-architectural monuments heritage of former citizens.

The third section presents some theoretical propositions directed to the solution of current urban development problems and cohesion of Shoushi. It shows progress not in the structure and form of the most comprehensive parts of the urban development of Shoushi and its historical-architectural image. There are also some theoretical and practical recommendations that can be used in similar future development.